

**«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ
ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ գործադիր մարմնի աշխատանքների գնահատման գործառույթը վերապահված է բանկի Խորհրդին: Գործադիր մարմնի կատարած աշխատանքները Խորհուրդը գնահատում է գործադիր մարմնի կողմից պարբերաբար իրեն ներկայացվող հաշվետվությունների հիման վրա: Խորհուրդը բանկի գործադիր մարմնի կատարած աշխատանքները գնահատում է յուրաքանչյուր եռամսյակ:

Գործադիր մարմնի աշխատանքները գնահատվում են ելնելով գործադիր մարմնի կողմից իրականացվող

- Բանկի ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքից,
- Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումից,
- Ռիսկերի գսպմանը ուղղված գործառույթներից,
- Բանկի ընթացիկ գործունեության արդյունավետ կառավարումից,
- Տոկոսադրույքների քաղաքականությունից,
- Եկամուտների և ծախսերի արդյունավետ պլանավորումից և իրականացումից,
- Կադրային քաղաքականությունից: